

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/7

15 հունվարի 2013թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Կարեն Սարգսյանի 17.12.2012թ-ի դիմում-բողոքը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.12.2012թ. թիվ 14523-12) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 08.10.2012թ-ի թիվ 2118305 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Կարեն Սարգսյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 29.04.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում, 29.10.2012թ-ին կազմվել է թիվ 2118305 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 750.000 դրամ:

Ա/Ձ Կարեն Սարգսյանը 17.12.2012թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացրել է դիմում-բողոք ստուգման ակտի դեմ: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 15.01.2013թ-ի գրությամբ Ա/Ձ Կարեն Սարգսյանը բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի վերոգրյալ 17.12.2012թ-ի դիմում-բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ Ա/Ձ Կարեն Սարգսյանի 17.12.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Ա/Ձ Կարեն Սարգսյանի 17.12.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



Հանձնաժողովի նախագահ

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ